

Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 17

Աստուծոյ Միութիւնն ու Պարզութիւնը – Աստուած մի պարզ էակ է: Սա չի նշանակում որ Նա պարզունակ է, այլ նշանակում է որ Նա մի բարդակազմ եւ տարբեր մասնիկներից կազմւած մի էակ չի: Աստուած չի կարող բաժանել տարբեր մասնիկների:

Մարդ արարածը բարդ էակ է, ու նրա էութիւնը կազմւած է տարբեր մասնիկներից, ինչպէս նրա գլուխը, մազերը, աչքերը, ակնջները, ոսկորները, ներքին անդամները: Եթէ մարդուս էութեան որեւէ մի մասնիկը անջատուի նրանից, գործիման նրա արմուկները կամ ոտները կամ աչքերը, այն անհատը տակաւին կ'մնայ որպէս մարդ արարած, ու այսպիսով այն անջատուը որեւէ ազդեցութիւն չունի նրա բնութեան վրայ:

Որպէս մարդ արարածներ մենք միտում ունենք մտածելու թէ Աստուած տարբեր յատկութիւններից բաղկացած մի էութիւն է: Օրինակի համար մենք մտածում ենք թէ Աստուծոյ էութեան մի մասը սէր է, մի մասը սրբութիւն է, մի մասը արդարութիւն է, մի մասը բարութիւն է, եւ այլն, ու սրանց բոլորի խառնուրդով ու միացումով ստացում է Աստուած: Աստուծոյ մասին այսպիսի տեսանկիւնը սխալ է: Աստուած իր բոլոր յատկութիւնների լիութիւնն է: Աստուծոյ յատկութիւնները անբաժանելի կերպով են կապւած իրարու հետ: Պատշաճ բացատրութեամբ անելի ուղիղ է ասել թէ Աստուած իր յատկութիւններն է՝ Բան թէ Աստուած իր յատկութիւններն ունի: Աստուած Սէր է, Աստուած գերիշխան է, Աստուած սուրբ է, եւ այլն: Նոյն ժամանակում Նա իր բոլոր յատկանշերն է անբաժանելի եւ անբաժանելի կերպով: Եթէ այն յատկանշերից որեւէ մէկը առնուի Աստուծոց, Նա կը դադարի Աստուած լինելուց:

Դժբախտաբար, Աստուծոյ պարզութեան մասին եղած դիւրիմացութիւնների հետեւանումով, բազմաթիւ վարդապետական սխալներ են յառաջացել: Շատերը բաժանում են Աստուծոյն գնազան մասնիկների ու իրարուց անջատ յատկանշերի: Օրինակի համար նրանք ասում են թէ իրենց Աստուածը սիրող Աստուած է, ողորմած Աստուած է, եւ ոչ թէ մի բարկացող Աստուած: Աստուածաշունչը թոյլ չի տալիս որ մարդիկ այսպէս անեն: Աստուածաշունչի Աստուածը իրարի որ սիրող Աստուած է բայց Նրա սէրը միացւած է իր բոլոր միւս յատկանշերի հետ: Աստուած սէր է, բայց այս սէրը սուրբ սէր է, արդար սէր է, յաւիտենական սէր է, եւ այլն: Աստուծոյ սէրը չի գոյատեւում անջատ Նրա միւս յատկանշերից: (Ելից 34:6-7, Առակաց 3:33, Ա. Յովհաննէս 4:8, Յայտնութիւն 6:15-16)

Շատեր, ներառեալ հաւատացեալներ, անջատում ու ընտրում են Աստուծոյ այն յատկութիւնները որոնք իրենց դիւրն են գալիս (ինչպէս օրինակ սէրը, բարութիւնը, շնորհիւր, ողորմութիւնը) եւ հետո եւ մնում այն յատկութիւններից որոնց նրանք գտնում են տհաս (ինչպէս օրինակ սրբութիւնը, արդարութիւնը, բարկութիւնը): Այս հակասութեամբ յիմն է: Մենք չենք կարող Աստուծոյ մի կարգ յատկութիւնները գերադասենք Նրա միւս յատկութիւններին: Այս անելով մենք պաշտած կը լինենք Աստուծոյ յատկութիւններին (օրինակ Նրա սիրոյն) եւ ոչ թէ Աստուծոյ անձին: Մենք չենք կարող Աստուծային յատկութիւնների գերաշարք ունենալ: Աստուած չի կարող աչքաբող անի իր յատկութիւններից ոմանց ի շահ իր միւս յատկութիւններին:

Աստուծոյ միութիւնը ցոյց է տալիս Նրա անբաժանելութիւնը: Երբոր մենք մտածում ենք Աստուծոյ եւ Նրա յատկութիւնների մասին, մենք մտածելու ենք թէ սրանք շղթայւած են իրարու հետ ու կախեալ են իրարուց: Աստուծոյ յատկանշերը իրարու հետ միաբան ու իրարու հետ համերաշխ են:

Աստուծոյ Ցատկանշերը – Ցատկանշերը ստորոգելիներ են, վարելակերպի յատկութիւններ ու բնորոշութիւններ են որոնք սահմանում են անհատին: Մենք տեսնում ենք Աստուծոյ յատկանշերը այն ինչ բաներից որով Աստուած յայտնել է մեզ իր անձին ու իր արարքների մասին: Վերակազմ աստուածաբանութիւնը պատմականօրէն գնազանութիւն է դրել Աստուծոյ անհատորդի եւ հաղորդելի յատկանշերի միջեւ:

Աստուծոյ Անհատորդի Ցատկանշերը – Սրանք այն եզակի յատկանշերն են որոնք պատկանում են միմիայն Աստուծոյ, շեշտելով Աստուծոյ բացարձակ էութիւնը: Սրանք Աստուծոյ բնութեան այն ստորոգելիներն են որոնց ուրիշ արարածներ կարող չեն ունենալ ու ոչ էլ հաղորդակից լինել նրանց: Նոյնիսկ Աստուած Ինք չի կարող որեւէ մի ուրիշի հաղորդի կամ փոխանցի այս յատկանշերը: Աստուծոյ անհատորդի յատկանշերի օրինակներից են Նրա միասնութիւնը, Նրա պարզութիւնը, Նրա ինքնագոյութիւնը, Նրա յաւիտենականութիւնը, Նրա անհունութիւնը եւ անփոփոխականութիւնը:

Աստուծոյ Հաղորդելի Ցատկանշերը – Սրանք այն յատկանշերն են որ Աստուած հաղորդակցում է մարդկութեան հետ, որին ստեղծել է իր պատկերով: Սրանք շեշտում են Աստուծոյ անձնական բնութիւնը, իր արարածների հետ ունեցած գնազան յարաբերութիւններով: Որոշ չափով մենք էլ արտացոլացնում ենք Աստուծոյ այս յատկանշերը: Աստուծոյ հաղորդելի յատկանշերի օրինակներից են Նրա սրբութիւնը, բարութիւնը, սէրը, անաչառութիւնը, գիտութիւն ու իմաստութիւնը:

Ոմանք ֆննադատում են այս դասակարգութիւնները ու սեպում են նրանց անօգուտ, բայց շատ աստուածաբաններ սեպում են այս դասակարգութեան որպէս խիստ գործածելի եւ կարեւոր մի տարբերութիւն, որովհետեւ այն ցոյց է տալիս թէ ինչպէս Աստուած չափազանց տարբեր է մեզանից: Ապա այն ցոյց է տալիս թէ ինչպէս Արարիչը տարբեր է արարածներից: Որեւէ արարած չի կարող երբեւիցէ ունենալ Աստուծոյ անհատորդի յատկանշերից մէկը: